ՆԱԽԱԳԻԾ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

03.04.2024թ. ժ. 10:00 Էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

***Խորհրդի անդամներ***

| | | |
|---|---|---|
| 1. | Արամ Խաչատրյան | «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ |
| 2. | Լուսինե Մնացականյան | «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն |
| 3. | Ինգա Հարությունյան | «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն |
| 4. | Հայկազ Ֆանյան | «Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ |
| 5. | Հակոբ Ավագյան | «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| 6. | Կարեն Զաքարյան | «Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ՀԿ |

| | | |
|---|---|---|
| | | |
| 7. | Տիգրան Պողոսյան | «Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա |
| 8. | Հրաչյա Զաքոյան | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ |
| 9. | Էդիտա Ղազարյան | «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն |
| 10. | Վարդան Ալեքսանյան | «Ինժիներական Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| 11. | Մարինա Սաղունյան | «Ինժիներական Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| 12. | Գուրգեն Գրիգորյան | «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| ***Հրավիրված անձինք*** | | |
| 14. | Օքսաննա Աբրահամյան | Երևանում Բրիտանիայի դեսպանատուն |

| | | |
|---|---|---|
| 15. | Ռուբերտ Սարուխանյան | Ֆոտոնկարիչ |
| 16 | Լեռնիկ Հարությունյան | ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ |
| 17 | Գոհար Գալյան | «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ |
| 19 | Արթուր Ալեքսանյան | Ֆինանսների նախարարության ներկայացուցիչ |
| 20 | Մարգարիտա Զալիբեկյան | Արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության իրավական ապահովման վարչության պետ |
| 21 | Շողակաթ Նահատակյան | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ |
| | | |
| ***Քարտուղարության անդամներ*** | | |
| 24. | Հովսեփ Պատվականյան | ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար |

| | | |
|---|---|---|
| 25. | Հայկ Մալխասյան | ՎՀԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու |
| 26. | Դավիթ Աղաջանյան | ՎՀԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ |
| 27. Վիկտորիա Կամարյան | | ՎՀԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող |
| 28. Հասմիկ Տոնապետյան | | ՎՀԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու |

## ՕՐԱԿԱՐԳ

**Հարց 1. Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցում՝**

***1) Առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների չկատարումը կանխարգելող կարգավորումներ,***

***2) Մշակող արդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից նոր աշխատողների՝ այդ թվում աշխատանքային փորձ չունեցող կամ վերարտակավորման կարիք ունեցող անձանց ներգրավումը և աշխատանքային պայմաններում ուսուցումը խրախուսող միջոցառում,***

*3) Հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքի կանխատեսելի և ճկուն օրենսդրական կարգավորումների ներդրում («ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ),*

*4) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցում (««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ),*

*5) ՍԵՅՖ (Simple Agreement for Future Equity - SAFE) պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),*

*6) Բազմամյա տնկարկների հիմնման նպատակով համայնքային հողերի վարձակալության ժամկետի վերանայում («ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ)*

*7) Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրաբերությունների ծավալը մեծացնելու նպատակով («ՀՀ հարկային օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ),*

*8) Օպցիոնի պայմանագրի հասկացության և դրա կիրառման հիմնական պայմանների սահմանում, օպցիոնի պայմանագրերի համար իրավակարգավորող դաշտի ստեղծում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)*

*9) Գործատուի կողմից օրենքով սահմանված կարգով աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության վերանայման հնարավորություն («Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի*

*Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)*

*10) ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳԱԱ կամ ԱԴԳՏ կոդերի սխալ տպագրման դեպքում (իրականությանը համապատասխանող ապրանքի անվանման տպագրման պայմաններում) ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանում: («Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)*

*11) Աշխատանքային պայմանագրերի շտեմարանի ստեղծում (ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ)*

*12) Գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի կնքման համար իրավակարգավորումների ներդրում («ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ),*

*13) Փորձաքննության արդյունքների համաձայն երկակի նշանակության ապրանքներ չհանդիսացող ապրանքների արտահանման և ռազմական նշանակության ապրանք չհանդիսացող ապրանքների ներմուծման ժամանակ կրկնակի փորձաքննության անհրաժեշտությունը բացառելուն ուղղված կարգավորումների ներդրում («Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքում լրացում կատարելու մասին և «Մաքսային կարգավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր).*

*14) Կրթական ծրագրերի իրականացման համար սահմանված որոշ տեխնիկական պահանջների վերանայում*

***15) Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման կարգավորումների բարեփոխման նախաձեռնություն («ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)***

***16) ՍՊԸ բաժնեմասի կամ Բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի փոխարկելի փոխառության պայմանագրի վերաբերյալ իրավական կարգավորումների ներդրում («ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ):***

***Հարց 2. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման հետևանքով առաջացող կադաստրային արժեքների տարբերությունը վճարելու պարտավորությունը տարաժամկետելու հնարավորության ներդրում («ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ)***

Նիստի բացմանը ՎՋԵԲ կողմից ֆինանսավորվող Հայաստանի Ներդրումային Խորհրդի (այսուհետ՝ ՀՆԽ) ղեկավար Հովսեփ Պատվականյանը հանդես եկավ նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցմամբ: Մասնավորապես նշելով, որ 6 իրավական ակտ 2023 թվականին ընդունվել է ԱԺ կամ Կառավարության կողմից, ինչպես նաև ներկայացրեց դեռևս քննարկումների և համաձայնեցումների փուլում գտնվող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Զեկուցումից հետո ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նորանշանակ նախարար Գևորգ Պապոյանը: Պարոն Պապոյանը հայտնեց, որ կարևորում է պետություն-մասնավոր երկխոսության հարթակ հանդիսացող ՓՄՁ զարգացման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) և ենթախորհրդի շրջանակներում արդեն իսկ կատարված աշխատանքները, և հույս ունի, որ խորհրդի արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են և իր կողմից հետայսու ամեն ինչ կարվի խորհրդի և

ենթախորհրդի աշխատանքների գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ տնտեսական զարգացման առկա ներուժի ընդլայնման համատեքստում:

Խորհրդի հետ կապված իր դիտարկումները հայտնեց «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ն ներկայացնող Հակոբ Ավագյանը: Վերջինիս համաձայն, իր կողմից բազմիցս բարձրաձայնվել է խորհրդի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով խորհրդի և աշխատակարգի փոփոխության անհրաժեշտության մասին՝ խորհրդի և ենթախորհրդի անդամ հանդիսացող մասնավոր հատվածի անդամների մասնավորապես խոսքը վերաբերում էր Առևտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամակցության, ռոտացիոն փոփոխություններին և այլնի հետ կապված:

Դիտարկմանը անդրադարձ կատարեց ՀՆԽ-ի ղեկավար Հովսեփ Պատվականյանը, ով նշեց, որ համաձայն աշխատակարգի, ռոտացիայի կարգով նոյեմբերին նախատեսվում է մասնավոր հատվածի կազմի փոփոխություն և բոլոր անդամները կարող են դիմել: Ինչ վերաբերում է Առևտրաարդյունաբերական պալատի խորհրդի անդամակցության հարցին, պարոն Պատվականյանը հարկ համարեց նշել, որ խորհրդի անդամակցության հայտերի ներկայացումը իրականացվում է կամավոր հիմունքներով և բաց մրցույթի արդյունքում:

Քանի որ պալատը անդամակցության հայտ չէր ներկայացրել և ըստ այդմ էլ չէր կարող դիտարկվել վերջինիս անդամակցության հարցը:

Հարցին անդրադարձ կատարեցին նաև Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը: Մասնավորապես պարոն Պապոյանը նշեց, որ մոտեցումն իհարկե հասկանալի և ընդունելի է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես Էկոնոմիկայի նախարար, նոր է ստանձնել ՓՄՁ զարգացման ենթախորհրդի նախագահի պաշտոնը, այս փուլում նպատակահարմար է գտնում ենթախորհրդի աշխատանքների ներկայիս ձևաչափով շարունակականության ապահովումը:

Ի հավելումն վերոհիշյալի, Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը նշեց, որ էկոնոմիկայի նախարարությունը բաց է ցանկացած առաջարկության քննարկման համար՝ ուղղված խորհրդի գործունեության նպատակայնության և արդյունավետության

բարձրացմանը: Այնուհետև խոսքը փոխանցվեց ՀՆԽ-ի ղեկավար պարոն Պատվականյանին, ով ըստ զեկուցողների, ներկայացրեց օրակարգային նոր հարցը, որը վերաբերում էր Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման հետևանքով առաջացող կադաստրային արժեքների տարբերությունը վճարելու պարտավորությունը տարաժամկետելու հնարավորության ներդրման առաջարկությանը:

**Հարց 2. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխման հետևանքով առաջացող կադաստրային արժեքների տարբերությունը վճարելու պարտավորությունը տարաժամկետելու հնարավորության ներդրում («ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ):**

**ՔՆՆԱՐԿՎԵՑ՝**

«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» ՀԿ-ն ներկայացնող Ինգա Հարությունյանի զեկուցմամբ ներկայացվեց հարցի կարգավորման անհրաժեշտության և օրենսդրական առաջարկի հետ կապված հակիրճ տեղեկատվություն: Տիկին Հարությունյանը նշեց, որ Հողային օրենսգրքի ներկայումս գործող կարգավորումները նախատեսում են, որ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համար անհրաժեշտ է ամբողջությամբ վճարել կադաստրային արժեքների տարբերությունների գումարը, ինչը ֆինանսական լրացուցիչ բեռ է առաջացնում ներդրողների համար: Վերջիններս ստիպված են լինում ներդրումային ծրագրի սկզբնական փուլում իրականացնել բուն բիզնես գործունեության հետ չկապված մեծ ծախսեր՝ հողամասի կադաստրային արժեքի տարբերության ծախսի տեսքով, ինչը շատ տնտեսավարողների զերծ է պահում ներդրումներ իրականացնելուց:

Հատկանշական է, որ հաճախ ներդրումները նախատեսվում է իրականացնել այնպիսի տարածքներում գտնվող հողերի վրա, որոնք տնտեսապես խոցելի են և ունեն զարգացման մեծ պոտենցիալ: Ծախսի մեծությունը տարբեր գործոններից է կախված, չափից, տեղից, գումարից, սակայն 20 միլիոն դրամ և ավելի գումարի չափով ներդրումներ պահանջող բիզնես պրոյեկտիների դեպքում ներդրողները հիմնականում հրաժարվում են

դրա իրականացումից: Ինգա Հարությունյանը նշեց, որ առաջարկությունը ձևավորվել է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ քննարկման արդյունքներով և օրենսդրական առաջարկի նպատակն է, հողամասի նպատակային նշանակությունը փոխելիս կադաստրային արժեքների տարբերությունը քսան միլիոն դրամը գերազանցելու դեպքում, հողամասի սեփականատիրոջը հնարավորություն տալ՝ համապատասխանաբար քսան և տասը միլիոն դրամը գերազանցող գումարը վճարել մինչև տասը տարվա ժամկետում:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոխելիս կադաստրային արժեքների տարբերությունը քսան միլիոն դրամը (իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում՝ տասը միլիոն դրամը) գերազանցելու դեպքում, հողամասի սեփականատերը համապատասխանաբար քսան և տասը միլիոն դրամը գերազանցող գումարը կարող է վճարել մինչև տասը տարվա ժամկետում:

Տիկին Հարությունյանը նշեց նաև, որ նախատեսվում է, որ կարգավորումը կխթանի ներդրումների ավելացմանը

ՀՆԽ-ի ղեկավար Հովսեփ Պատվականյանը տեղեկացրեց, որ հարցի հետ կապված իրականացվել է ուսումնասիրություն, որը ամբողջացնելու ժամկետի ավարտով պայմանավորված, չի տրամադրվել ենթախորհրդի անդամներին: Պարոն Պատվականյանը ներկայացնելով ուսումնասիրությունը շնորհանդեսի ձևաչափով միջոցով, նշեց որ հարցը արդիական է, ինչ մասին են վկայում նաև ՏԿԵՆ-ից ստացված տվյալները, ինչը ցույց է տալիս, որ ներկա օրենսդրության պայմաններում տուժում է նաև համանքի բյուջեն:

Համաձայն պարոն Պատվականյանի, համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 5 միլիոն ներդրումների դեպքում 96% դեպքերում վճարել են, իսկ 20 միլիոն և ավել գումարների ժամանակ 86% դեպքերում 1,5 տարվա ընթացքում իրավաբանական անձը չի վճարում: Ինչը նշանակում է, որ չվճարված գումարները ավելի մեծ են, քան վճարվածները:

Հարցի հետ կապված որոշ պարզաբանումներ ներկայացրեց ՀՆԽ-ի ավագ իրավաբան Հայկ Մալխասյանը: Մասնավորապես վերջինս նշեց, որ առաջարկվող կարգավորումների համաձայն հողամասի նպատակային նշանակությունը փոխելիս կադաստրային արժեքների տարբերությունը քսան միլիոն դրամը (իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքներում՝ տասը միլիոն դրամը) գերազանցելու դեպքում, հողամասի սեփականատերը համապատասխանաբար քսան և տասը միլիոն դրամը գերազանցող գումարը կարող է վճարել մինչև տասը տարվա ժամկետում: Ընդ որում, Կադաստրային արժեքների տարբերության տարաժամկետ վճարման ժամանակացույցը հաստատվելու է համայնքի ավագանու որոշմամբ:

Հարցի վերաբերյալ դիտարկումներ ներկայացրեցին նաև ենթախորհրդի այլ անդամներ և հրավիրված Պետական գերատեսչություններից՝ «Ներդրումներ աջակցման կենտրոն» հիմնադրամի, Ֆինանսների նախարարության ներկայացուցիչները: Մասնավորապես. ՏԿԵՆ-ի ներկայացուցիչը նշեց, որ իրենց նախարարությունը դեռևս 2018 թվականին մշակել էր նմանատիպ նախագիծ այլ պայմաններով, սակայն այն հանվել է շրջանառությունից, որոշակի ռիսկերի դիտարկմամբ: Ինչ վերաբերում է քննարկվող նախագծին, տիկին Նահատակյանը նշեց, որ ՏԿԵՆ տեսանկյունից ընդհանուր առմամբ ընդունելի է նախագիծը, սակայն կարծում են, որ այն խորքային վերլուծություն է պահանջում՝ բարենպաստ ներդրումային ծրագրերի ոչ բարենպաստ համայնքների համար, կադաստրային արժեքների բյուջե մուտքագրման տեսանկյունից և այլն:

Նախարարի տեղակալ պարոն Գևորգյանը ներկայացրեց որոշ մտավախություններ կապված կարգավորման հնարավոր ռիսկերի հետ: Մասնավորապես, հաշվի առնելով եկամտային հարկի վերադարձի արտոնության վերանայման հանգամանքը, որի համաձայն հիփոթեքային վարկի տոկոսադրույքի մարմանն ուղղվող եկամտային հարկի վերադարձի համակարգը մինչև 2027 թ.-ը կգործի Երևանին հարակից մարզերում, իսկ դիտարկվող խնդիրը հիմնականում վերաբերում է Երևանին հարակից Կոտայքի մարզին, ինչպես նաև Աշտարակ համայնքին, հնարավոր է գնված հողային տարածքները դիտարկվում են

բնակարանաշինության նպատակով հետագա վերավաճառքի առարկա: Համաձայն պարոն Գևորգյանի, գուցե անհրաժեշտություն կա, հասկանալ, արդյոք նման ռիսկեր առկա են թե ոչ: Նշվածի մասով էկոնոմիկայի նախարար պարոն Պապոյանը վերահաստատելով նշված դիտարկումը, դիրքորոշում հայտնեց, որ անհրաժեշտ է համարում ավելի շատ ներդրողների հետ հանդիպումներ իրականացնել՝ խնդիրն առավել խորքային ուսումնասիրելու և վերջինիս արդյունքներով միայն վերջնական որոշում կայացնել առաջարկվող կարգավորման մասով: Ի հավելում վերոգրյալի, ՀՆԽ-ի ղեկավար պարոն Պատվականյանը նշեց, որ պետք է ուսումնասիրել արդյոք պետք է ներդրումները և ժամկետները իրար հետ կապել, արդյոք պետք է տարանջատված մոտեցում կիրառել ըստ համայնքների և հողի տեսանկյունից:

**ՈՐՈՇՎԵՑ՝**

Քննարկման արդյունքներով էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը հանձնարարեց ՀՆԽ-ին՝ հանդիպումներ իրականացնել ներդրողների հետ՝ խորքային ուսումնասիրելով հարցը, քարտեզագրել խնդիրները և ըստ արդյունքների ներկայացնել համապատասխան վերլուծություն, որը հիմք ընդունելով կարելի է վերջնական որոշում կայացնել առաջարկվող կարգավորման մասով:

Նիստը նախագահող

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ